ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք.
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղադիր, 4 փ, 4 շ., Հեռ. (094) 248414 ,
geghadir.kotayq@mta.gov.am

N 116
10 օգոստոս 2017թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ. ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ.
<<Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն, Ձեզ է ուղարկվում Գեղադիր համայնքի ավագանու 2017թվականի օգոստոսի 8-ի արտահերթ նիստի որոշումները:

Առդիր 7 թերթ:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կատար. Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Մուրադյան
հեռ. 096161060

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, gegharir.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 օգոստոսի 2017թվականի N 31-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.
1)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի պարզեցված գլխավոր հատակագիծը հաստատելու մասին
2)Գեղադիր համայնքի վարչական տարածքում 2017թվականի օգոստոս- դեկտեմբեր ամիսների համար աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանելու մասին
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 օգոստոսի 2017թվականի N 32-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3 հոդվածի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թվականի դեկտեմբերի 22-ինN1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի(բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագիծը/այսուհետ գլխավոր հատակագիծ/՝ համաձայն հավելվածի:
2.Պարզեցված գլխավոր հատակագծով սահմանված հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված <<Քաղաքաշինության մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3 հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի <<Կառուցապատման համար նախատեսված տարածքների բաշխումն ըստ նպատակային նշանակության փոփոխությունների>>գծագրին և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան:
3.Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել պարզեցված գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ըստ սահմանված հերթականության և <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14,3 հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան

ընթացիկ հաշվառման տվյալներում,համայնքի հողային հաշվեկշիռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

Գեղադիր համայնքի ավագանու

2017թ.օգոստոսի 8-ի N32-Ն որոշման

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ				
N	Առկա նպատակային նշանակությունը	Տարածքի մակերեսը	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային նշանակությունը	Տարածքի մակերեսը (հա)
1	2	3	4	5
Առաջնահերթ (մինչև 5 տարի)				
I	գյուղատնտեսական հողերից, որից		բնակավայրերի հողեր	
1	վարելահող	16.37	բնակելի կառուցապատում	16.37
2	արոտ	0.96	բնակելի կառուցապատում	0.96
Ընդամենը բնակելի կառուցապատում				17.33
II	գյուղատնտեսական հողերից, որից		բնակավայրերի հողեր	
3	այլ հողեր	0.12	հասարակական կառուցապատում	0.12
III	արդյունաբ., ընդերքօգտ. և այլ արտ. նշանակութ		բնակավայրերի հողեր	
4	գյուղ. արտադրություն	0.29	հասարակական կառուցապատում	0.29
IV	գյուղատնտեսական հողերից, որից		բնակավայրերի հողեր	
5	այլ հողեր	0.95	Ընդամենը ընդհանուր օգտագործման կանաչ գոտի	0.95
VI	արդյունաբ., ընդերքօգտ. և այլ արտ. նշանակութ		բնակավայրերի հողեր	
6	գյուղ. արտադրություն		Ընդամենը ընդհանուր օգտագործման կանաչ գոտի	5.04
Ընդամենը բնակավայրի ընդհանուր օգտագործման կանաչ գոտի				5.99
VII	գյուղատնտեսական հողերից, որից		բնակավայրերի հողեր	
7	այլ հողեր	1	Ընդամենը ընդհանուր օգտագործման գոտի	1.0
Ընդամենը բնակավայրի ընդհանուր օգտագործման գոտի				1
Ընդամենը առաջնահերթ				*24.73*
Միջնաժամկետ (մինչև 5-10 տարի)				
I	գյուղատնտեսական հողերից, որից		բնակավայրերի հողեր	
1	վարելահող	19.69	բնակելի կառուցապատում	19.69
Ընդամենը բնակելի կառուցապատում				19.69
II	գյուղատնտեսական հողերից, որից		բնակավայրերի հողեր	
2	վարելահող	0.61	հասարակական կառուցապատում	0.61
Ընդամենը հասարակական կառուցապատում				0.61
III	գյուղատնտեսական հողերից, որից		բնակավայրերի հողեր	
3	այլ հողեր	2.0	Ընդամենը ընդհանուր օգտագործման գոտի	2.0
4	արոտ	1	Ընդամենը ընդհանուր օգտագործման գոտի	1.0
Ընդամենը բնակավայրի ընդհանուր օգտագործման գոտի				3.0
IV	գյուղատնտեսական հողերից, որից		հատուկ պահպանվող հողեր	
5	արոտ		գերեզմանոց	1.0

Ընդամենը հատուկ պահպանվող հողեր				1.0
Ընդամենը միջնաժամկետ				*24.30*
Վերջնաժամկետ (մինչև 10-15 տարի)				
I	գյուղատնտեսական հողերից, որից		բնակավայրերի հողեր	
1	վարելահող	9.88	բնակելի կառուցապատում	9.88
2	արոտ	0.91	բնակելի կառուցապատում	0.91
3	այլ հողեր	5.83	բնակելի կառուցապատում	5.33
Ընդամենը բնակելի կառուցապատում				16.12
II	գյուղատնտեսական հողերից, որից		բնակավայրերի հողեր	
3	այլ հողեր	0.43	Ընդամենը ընդհանուր օգտագործման գոտի	0.43
Ընդամենը բնակավայրի ընդհանուր օգտագործման գոտի				0.43
III	բնակավայրերի հողերից, որից		գյուղատնտեսական հողեր	
1	հասարակական կառուցապատում	4.9	այլ հողեր	4.90
Ընդամենը գյուղ. նշանակության գոտի				4.90
IV	գյուղատնտեսական հողերից, որից		էներգետիկայի, տրանսպորտի, կապի և այլ կոմունալ ենթակառ.	
1	արոտ		Կոմունալ ենթակառուցվածքներ	0.17
Ընդամենը էներգետիկայի, տրանսպորտի, կապի և այլ կոմունալ ենթակառ.				0.17
Ընդամենը վերջնաժամկետ				21.62
Ընդամենը				70.65

Տարածքների բաշխումն ըստ գործառնական նշանակության փոփոխության:

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ				
N	Առկա նպատակային նշանակությունը	Տարածքի մակերեսը	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային նշանակությունը	Տարածքի մակերեսը (հա)
1	2	3	4	5
Առաջնահերթ (մինչև 5 տարի)				
I	բնակավայրի		բնակավայրերի հողեր	
1	բնակավայրի այլ հողեր	0.1	հասարակական կառուցապատում	0.01
Ընդամենը հասարակական կառուցապատում				0.01
Վերջնաժամկետ (մինչև 10-15 տարի)				
II	բնակավայրերի հողեր		բնակավայրերի հողեր	
2	հասարակական կառուցապատում	0.5	բնակելի կառուցապատում	0.5
Ընդամենը բնակելի կառուցապատում				0.5
Ընդամենը				0.51

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, gegharir.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 օգոստոսի 2017թվականի N 33-Ն

ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍ_ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 20-րդ կետերի <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի,<<Տեղական տուրքերի և վճարների մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի <<դ>>,<<ե>> կետերի և 11-րդ հոդվածի՝համայնքի ավագանին որոշում է.

1.Գեղադիր համայնքի վարչական տարածքում 2017թվականի օգոստոս-դեկտեմբեր ամիսների համար սահմանել աղբահանության վճար՝

1)կենցաղային աղբի համար ՝ըստ հաշվառված անձանց քանակի՝համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 0.0 /զրո/ դրամ,

2)ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի՝մեկ խորանարդ մետր աղբի համար 2 000/երկու հազար/ դրամ,ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10000/տաս հազար/ դրամ:

2.Սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված աղբի ծավալը կամ զանգվածը որոշելու (պարզելու) անհնարինության դեպքում,այդ թվում տեխնիկական,աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է հետևյալ ամսական դրույքաչափերով՝

1)առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մեկ քառ մետրը 20 /քսան/դրամ.

2)հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ իրականացնող օբյեկտների մեկ քառ.մետրը 10/տաս/ դրամ.

3)արտադրական,արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մեկ քառ. մետրը 4 չորս/դրամ.
4)կրթական մշակութային,առողջապահական.սպորտային,գիտահետազոտական շինությունների մեկ քառ.մետրը 2/երկու/ դրամ:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ